



# ՄՈՒՐԲ ԶԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Խ ԿԵՂԵՅԻ



### ԳԱՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻ

29 ՄԱՐՏ 2009

<b>Կիրակնօրեայ ընթերցումներ</b>	էջ 1
<b>«Հաւատով խոստովանիմ»</b>	էջ 4
<b>Ծառը եւ իր Պտուղը</b>	էջ 4
<b>Ճշմարիտ Աշակերտները</b>	էջ 6
<b>Ծանուցում</b>	էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐԲԷՆ (66.1-24)

**Տ**էրը այսպէս կ'ըսէ.- «Երկինքը իմ աթոռ է եւ երկիրը՝ ոտքերուս պատուանդանը: Ինչպիսի՞ տուն պիտի շինէք ինձի համար, կամ ո՞ւր պիտի ըլլայ իմ հանգստավայրս. որովհետեւ երկինքն ու երկիրը ե՛ս ստեղծեմ եմ եւ իմս են,- կ'ըսէ Տէրը: Սակայն ես պիտի բնակիմ անո՛ր մէջ՝ որ հեզ է եւ քաղցր, եւ երկիւղածութեամբ կը հնազանդի իմ խօսքերուս:

Ես պիտի բնակիմ անո՛ր մէջ՝ որ հեզ է եւ քաղցր, եւ երկիւղածութեամբ կը հնազանդի իմ խօսքերուս:

Գալով անօրէն մարդուն, անոր՝ ինձի եզ զոհելը մարդասպանութեան համազօր է, ոչխար զոհելը՝ շուն մորթելու, նաչիհ մատուցանելը՝ խոզի արիւն ընծայելու, եւ իմ անունիս կնդրուկ ծխելը՝ ինձի հայհոյելու, որովհետեւ իրենք իրենց ցանկութիւնները կատարեցին եւ հոգիով իրենց գարշելի կուռքերուն փարեցան: Ուստի ես ալ հրապարակաւ պիտի խայտառակեմ զիրենք եւ իրենց մեղքերուն փոխարէնը պիտի հատուցանեմ իրենց. որովհետեւ կանչեցի զիրենք եւ չլսեցին զիս, խօսեցայ եւ մտիկ չըրին, եւ ըրին այն ինչ որ չար է իմ աչքիս, ընտրեցին այն ինչ որ կամքիս հակառակ էր»: Լսեցէ՛ք Տիրոջ պատգամը, ո՛վ աստուածավախներ. ձեզ ատող եւ ձեզ գգուելի համարողներուն ըսէք, ո՛վ եղբայրներ, թէ՛ Տիրոջ անունը պիտի փառաւորուի եւ այդ փառքը ձեր ուրախութեան մէջ պիտի արտացոլայ, իսկ իրենք ամօթով պիտի մնան: Ահա քաղաքէն աղաղակ մը կը լսուի, ձայն մը՝ որ տաճարէն կու գայ: Տիրոջ ձայնն է, որ իրեն հակառակորդներուն հատուցանելիք պատիժը կը վճռէ: Կարելի՞ քան է որ կին մը հազիւ յղացած՝ ծնի, որ երկունքի ցաւ չքաշէ եւ առանց երկունքի արու գաւակ մը ծնի:

Եւ պիտի բնակիմ անո՛ր մէջ՝ որ հեզ է եւ քաղցր, եւ երկիւղածութեամբ կը հնազանդի իմ խօսքերուս:

Միթէ լսուած կամ տեսնուած բան է որ երկիրը մէկ օրուան մէջ յղանայ եւ մէկ անգամէն ամբողջ ազգ մը ծնի: Բայց ահա Սիրոնը այդպէ՛ս յղացաւ եւ ծնաւ իր գաւակները: «Ե՛ս այդ յոյսը տուի քեզի, եւ դուն զիս մոռցար,- կ'ըսէ Տէրը,- մոռցար որ ե՛ս է որ կը ստեղծեմ ամուլը եւ ծնանողը», - կ'ըսէ քու Աստուածը: Ուրախացի՛ր, Երուսաղէ՛մ, եւ դուք՝ Երուսաղէ՛մը սիրողներ, այնտեղ տօն կատարելու հաւաքուեցէք. անոր հետ միասին ուրախացէք եւ ցնծացէք դուք՝ որ անոր համար նստած սուգ կ'ընէիք, քանի կատարեալ մխիթարութիւն պիտի գտնէք անոր մայրական գիրկին մէջ, եւ կուշտ ու կուռ պիտի վայելէք անոր գալիք փառքը: Որովհետեւ Տէրը այսպէս կ'ըսէ.- «Ահաւասիկ ես խաղաղութեամբ պիտի ողողեմ զիրենք, գետի մը պէս, ազգերու փառքով պիտի ծածկեմ, յորդահոս հեղեղի մը պէս: Անոնց գաւակները ուսերու վրայ պիտի բերուին եւ ծունկերու վրայ պիտի գգուուին: Ինչպէս մայր մը կը գգուէ իր մանուկը, այնպէս պիտի գգուեմ ձեզ եւ մխիթարութիւն պիտի գտնէք»: Այո՛, պիտի տեսնէք այս բաները եւ ձեր սիրտերը խնդութեամբ պիտի լեցուին, ձեր մարմինները դալար խոտի պէս պիտի թարմանան: Տիրոջ ձեռքը պահապան պիտի ըլլայ իր երկիւղածներուն վրայ, իսկ անհաւատներու գլխուն որպէս սպառնալիք պիտի կախուի, որովհետեւ ահա Տէրը կու գայ կրակի պէս եւ անոր կառքերը՝ մրրիկի պէս, իր բարկութեամբ հատուցանելու եւ բոցավառ կրակով բնաջնջելու: Այո՛, Տէրը կրակով պիտի դատէ բոլոր մարդիկը, եւ շատ պիտի ըլլան Տիրոջ սուբով ինկողները: «Անոնք որ մաքրութեան յատուկ ծէսերէ կ'անցնին՝ պարտէզներու մէջ կուռքեր պաշտելու համար, եւ սրահներու մէջ քաշուած՝ խոզի միս, գարշելի կենդանիներ եւ մուկ կ'ուտեն, միասին պիտի բնաջնջուին,- կ'ըսէ Տէրը,- որովհետեւ ես գիտեմ իրենց ծածուկ գործերն ու խորհուրդները: Ահա եւ կու գամ բոլոր ազգերն ու ժողովուրդները հաւաքելու: Անոնք պիտի գան եւ իմ փառքս տեսնեն: Անոնցմէ ինձի հաւատարիմ մնացողներուն վրայ նշան պիտի դնեմ, եւ այդ փրկուածները պիտի զրկեմ բոլոր ազգերուն,

Տիրոջ ձեռքը պահապան պիտի ըլլայ իր երկիւղածներուն վրայ...

դէպի Սպանիա, Լիպիա, Լիբիա, Փոլիւզիա, Կիլիկիա եւ Յունաստան, եւ մինչեւ հեռաւոր կղզիներ որոնք իմ անունս չեն լսած եւ փառքս չեն տեսած: Անոնք այս ազգերուն պիտի պատմեն իմ փառքս եւ անունս, եւ բոլոր ազգերուն մէջէն ձեր եղբայրները գտնելով՝ զանոնք ինծի պիտի բերեն որպէս նուէր: Պիտի բերեն ձերերով ու կառքերով, եւ ձիաքարչ ծածկաւոր գահաւորակներով, այնպէս՝ ինչպէս Իսրայէլի որդիները սաղմոսելով իմ տաճարս կու գային իրենց գոհերը ինծի բերելով. եւ ես անոնց մէջէն ինծի համար քահանաներ ու ղեկաւորներ պիտի ընտրեմ,- կ'ըսէ Տէրը: Եւ ինչպէս նոր երկինքն ու նոր երկիրը զոր ահա ես կը ստեղծեմ ինձմով պիտի գոյատեւեն, այնպէս ալ ձեր սերունդն ու ձեր անունը ինձմով պիտի գոյատեւեն,- կ'ըսէ Տէր Աստուած,- եւ իրենց դէմ մեղանշած մարդոց դիակները, որոնց վրայէն որդերը պիտի չպակսին, եւ որոնք անդադար պիտի այրին, բոլոր մարդոց օրինակ ըլլալու համար»:

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**  
**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐՈՒՆ**  
**ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ**  
 (2.16-3.17)

**Կ**արեւորութիւն մի՛ տաք անոնց որոնք ձեզ կը քննադատեն թէ ինչո՛ւ չէք պահեր ուտելու եւ խմելու, տօնակատարութեանց, ամսամուտերու եւ Շաբաթ օրերու վերաբերող կանոնները. որովհետեւ

Չըլլայ որ ոեւէ մէկը իր խստակրօնութեամբ, հրեշտակներուն տուած կարեւորութեամբ եւ զանազան տեսիլներով ձեզ մոլորեցնէ եւ մրցանակէն զրկէ.

ալ դ զ Երեւանի քաղաքէն շատ քիչ հեռավորութեան վրայ գտնուող Ստեփաննոսի վանքէն: Երբ ինչպէս իրապարհականութեան շուքն էին, իսկ իրապարհականութիւնը Քրիստոսի մէջ է:

Չըլլայ որ ոեւէ մէկը իր խստակրօնութեամբ, հրեշտակներուն տուած կարեւորութեամբ եւ զանազան բաներու տեսիլներով ձեզ մոլորեցնէ եւ մրցանակէն զրկէ. որովհետեւ այդպիսիները մարդկային հպարտութենէ տարուած են եւ կ'ուզեն իրենք զիրենք պարտադրել ձեզի: Անոնք կապ չունին Գլուխին՝ Քրիստոսի հետ.

մինչդեռ մարմինը՝ Քրիստոսի եկեղեցին, իր բոլոր յօդերով ու խաղերով Գլուխին կապուած ու միացած, անկէ կ'առնէ իր աճումը, Աստուծոյ կամքին համաձայն:

Քանի Քրիստոսի հետ մեռաք եւ բնութեան ոյժերու տիրապետութենէն դուրս եկաք, ինչո՞ւ կը շարունակէք ապրիլ այնպէս՝ որպէս թէ ձեր կեանքը աշխարհէն կախում ունենար,

եւ կը հնազանդիք մարդոց կողմէ տրուած եւ ուսուցուած պատուիրաններու, ինչպէս. «Մի՛ մօտենար, մի՛ ուտեր, մի՛ դպչիր», եւ այլն: Ասոնք բոլորն ալ բաներ են՝ որոնք գործածութեամբ կը փճանան: Այդպէս պատուիրողները իմաստուն կրնան թուիլ՝ իրենց բարեպաշտական ինքնակամ արտայայտութիւններով, խստակրօնութեամբ եւ մարմինը անխնայ կերպով ճնշելով, բայց այս բաները որեւէ արժէք չունին եւ միայն մարմինը բաւարարելու կը ծառայեն:

Քանի որ յարութիւն առիք Քրիստոսի հետ, այսուհետեւ ձեր ուշադրութիւնը երկինք դարձուցէք, որովհետեւ հոն է Քրիստոս, Հօրաջ կողմը նստած: Երկնաւոր բաներու մասին խորհեցէք եւ ոչ երկրաւոր բաներու. որովհետեւ դուք այս աշխարհին համար մեռաք, որպէսզի Քրիստոսի հետ միասին ապրիք այն կեանքով որ Աստուած վերապահած է ձեզի: Իսկ երբ Քրիստոս՝ մեր կեանքը՝ յայտնուի, այն ատեն դուք ալ փառքով պիտի յայտնուիք անոր հետ:

... դուք այս աշխարհին համար մեռաք, որպէսզի Քրիստոսի հետ միասին ապրիք այն կեանքով որ Աստուած վերապահած է ձեզի:

Հետեւաբար մեռցուցէ՛ք ձեր մէջ երկրաւոր ցանկութիւնները, այսինքն՝ ձեզմէ դուրս վանեցէք պոռնկութիւնը, պղծութիւնը, կիրքը, չար ցանկութիւնը եւ ազահոսութիւնը՝ որ կռակաշտութիւն է. որովհետեւ այդ բոլորը Աստուծոյ անհնազանդ մարդոց գործերն են, եւ Աստուած պիտի պատժէ զանոնք:

Նախապէս դուք ալ այդ բոլորը կ'ընէիք, երբ տակաւին այդ ցանկութիւններով կ'ապրէիք: Բայց հիմա ձեզմէ դուրս նետեցէք բարկութիւնը, զայրոյթը եւ չարութիւնը: Ձեր բերնէն որեւէ հայհոյութիւն կամ լկտի խօսք չլսուի: Սուտ մի՛ խօսիք իրարու: Մոռցէք ձեր հին կեանքն ու նախկին գործերը, եւ նոր մարդ եղէք՝ ձեր Արարիչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի զ Աստուած ճանչնաք: Անգամ մը որ նորոգուեցաք՝ ա՛լ չկայ հրեայ կամ հեթանոս, թլփատուած կամ անթլփատ, բարբարոս, վայրենի, ծառայ կամ ազատ. կայ միայն Քրիստոս, որ ամէն ինչ է եւ բոլորին մէջ:

Մոռցէ՛ք ձեր հին կեանքն ու նախկին գործերը, եւ նոր մարդ եղէ՛ք՝ ձեր Արարիչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի զ Աստուած նանչնաք:

Հետեւաբար, որպէս Աստուծոյ կողմէ ընտրուած

ու սրբուած եւ իր սէրը վայելող մարդիկ՝ գթասիրտ եղէք. եղէք ողորմած, քաղցր, խոնարհ, հեզ եւ համբերատար: Իրարու հանդէպ հանդուրժող եղէք. եւ ներեցէք իրարու, երբ մէկը միւսին դէմ արտունջ մը ունենաք: Ինչպէս Աստուած Քրիստոսի միջոցաւ ներեց

Ձեր սիրտերուն մէջ Քրիստոսի խաղաղութիւնը թող թագաւորէ...

ձեզի, այնպէս ալ դուք իրարու ներեցէք: Եւ այս բոլորին վրայ՝ աւելի սէր ունեցէք, որովհետեւ սէրը ամէն ինչի ամբողջացուցիչ շաղախն է: Ձեր սիրտերուն մէջ Քրիստոսի խաղաղութիւնը թող թագաւորէ, որովհետեւ Աստուած այդ խաղաղութեան կանչեց ձեզ մէկ մարմնի մէջ, որ Քրիստոսի եկեղեցին է: Ուստի շնորհակալ եղէք Աստուծոյ:

Թող Քրիստոսի խօսքը ձեր մէջ բնակի իր ամբողջ հարստութեամբ, որպէսզի կատարեալ իմաստութեամբ սորվեցնէք իրարու եւ գիրար խրատէք, եւ սաղմոսներով, օրհնութիւններով ու հոգեւոր երգերով ձեր սիրտերուն մէջ շնորհակալութեամբ զԱստուած օրհնէք: Եւ ինչ որ ալ ընէք, խօսքով թէ գործով, միշտ Տէր Յիսուսի անունով ըրէք, անոր միջոցաւ գոհուած յայտնելով Հօր Աստուծոյ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ  
(22.34-23.39)

**Ե**րբ փարիսեցիները լսեցին, թէ Յիսուս սաղմոսները պապանձեցուց, իրարու քով եկան: Անոնցմէ մէկը, օրէնսագէտ մը, Յիսուսը փորձելու համար հարցուց. «Վարդապետ, Օրէնքին մէջ ո՞րն է մեծագոյն պատուիրանը»: Յիսուս ըսաւ անոր. «Միքէ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ մտքովդ»: Ասիկա է մեծագոյն եւ առաջին պատուիրանը: Երկրորդ ասոր նման է, «Միքէ ընկերդ քու անձիդ պէս»: Այս երկու պատուիրաններէն կախեալ են ամբողջ Օրէնքը եւ մարգարէութիւնները»: Երբ փարիսեցիները հաւաքուեցան, Յիսուս հարցուց անոնց. «Ի՞նչ կը խորհիք Քրիստոսի, խոստացուած Փրկիչին մասին: Որո՞նք որդին

«Միքէ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ մտքովդ»: Ասիկա է մեծագոյն եւ առաջին պատուիրանը: Երկրորդ ասոր նման է, «Միքէ ընկերդ քու անձիդ պէս»:

է ան»: Անոնք պատասխանեցին. «Դաւիթի»: Յիսուս ըսաւ անոնց. «Բայց ինչպէ՞ս Դաւիթ Ս. Հոգիով ներշնչուած՝ զայն Տէր կը կոչէ ու կ'ըսէ. «Տէր իմ Տիրոջս ըսաւ. - Աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտներուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:

«Արդ, եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս անոր որդին կ'ըլլայ»: Ոչ ոք կրցաւ պատասխան տալ Յիսուսի. եւ այդ օրուընէ սկսեալ ոեւէ մէկը չէր համարձակեր իրեն հարցում ուղղել:

Ապա Յիսուս ժողովուրդին եւ իր աշակերտներուն ըսաւ.

«Մովսէսի աթոռը նստան օրէնքի ուսուցիչներն ու փարիսեցիները: Իրենց ըսածներուն հնազանդեցէք եւ կատարեցէք զանոնք, սակայն մի՛ ընէք ինչ որ իրենք կ'ընեն. որովհետեւ անոնք կը սորվեցնեն, բայց չեն կատարեր: Անոնք ծանր եւ դժուարակիր բեռներ կը դնեն մարդոց ուսերուն, մինչ իրենք նոյն բեռները կրելու նուազագոյն ճիգն իսկ չեն ըներ: Ինչ որ կ'ընեն՝ մարդոց երեւելու համար կ'ընեն: Իրենց գրապանակները կը լայնցնեն եւ իրենց հազուստներուն ծոպերը կ'երկնցնեն: Ընթրիքներու ընթացքին պատուոյ տեղերը գրաւել կը սիրեն եւ ժողովարաններու մէջ՝ առաջին աթոռները: Կը սիրեն հրապարակներու վրայ մարդոցմէ բարեւներ ընդունիլ եւ «Վարդապետ», այսինքն «ուսուցիչ» կոչուել: Բայց դուք ոեւէ մէկը «վարդապետ»

«... Ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

մի կոչէք, որովհետեւ դուք բոլորդ եղբայրներ էք եւ մէկ ուսուցիչ ունիք: Երկրի վրայ ոեւէ մէկը «հայր» մի՛ կոչէք, որովհետեւ դուք մէկ Հայր ունիք, որ երկինքի մէջ է: «Առաջնորդ» մի՛ կոչուիք, որովհետեւ ձեր միակ առաջնորդը Քրիստոս է: Ձեր մէջէն մեծը թող ձեր սպասաւորը ըլլայ: Ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ երկինքի արքայութիւնը կը փակէք մարդոց առջեւ. դուք չէք մտածեր եւ թոյլ չէք տար նաեւ անոնց որ կ'ողգեն մտները:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ մէկ կողմէ այրիներուն տունները իրենց ձեռքէն կը յափշտակէք, միւս կողմէ կեղծաւորութեամբ ձեր աղօթքը կ'երկարէք. ասոր համար աւելի խիստ դատապարտութիւն պիտի ընդունիք:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ մէկ կողմէ ծով ու ցամաք

կը շրջիք մէկը նորահաւատ ընելու համար, իսկ երբ յաջողիք՝ զայն ձեզմէ կրկնապատիկ աւելի գեհնի արժանի կ'ընէք:

«Վա՛յ ձեզի, կոյր առաջնորդներ: Կ'ըսէք. “Ան որ տաճարին վրայ կ'երդնու՝ երգումը կատարելու պարտաւորութեան տակ չէ, բայց ան որ տաճարին ոսկիին վրայ կ'երդնու՝ պարտաւոր է կատարելու”: Յիմարնե՛ր, կոյրե՛ր. ո՞ր մէկը կարեւոր է, ոսկի՞ն թէ տաճարը, որ կը սրբագործէ ոսկին: Կամ կ'ըսէք. “Ան որ զոհի սեղանին վրայ երգում կ'ընէ՝ երգումը կատարելու պարտաւորութեան տակ չէ, բայց ան որ կ'երդնու սեղանին դրուած զոհին վրայ՝ պարտաւոր է կատարելու”: Յիմարնե՛ր, կոյրե՛ր. ո՞ր մէկը աւելի կարեւոր է. զոհ՞ը թէ զոհասեղանը, որ կը սրբագործէ զոհը: Հետեւաբար, ով որ կ'երդնու սեղանին վրայ, կ'երդնու թէ՛ սեղանին եւ թէ՛ հոն եղածներուն վրայ: Ով որ կ'երդնու տաճարին վրայ, կ'երդնու թէ՛ տաճարին եւ թէ՛ Աստուծոյ վրայ, որ հոն կը բնակի: Նոյնպէս, ով որ կ'երդնու երկինքի վրայ, կ'երդնու թէ՛ Աստուծոյ գահին եւ թէ՛ Աստուծոյ վրայ, որ հոն կը նստի:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ անանուխին, սամիթին եւ չամանին տասանորդը կու տաք եւ կ'անտեսէք Օրէնքին կարեւոր պարտաւորութիւնները, այսինքն՝ արդարութիւնը, ողորմութիւնը եւ հաւատարմութիւնը: Ասոնք պէտք է գործադրել, առանց միւսները անտեսելու: Կո՛յր առաջնորդներ, մէկ կողմէ մոլորակը կը քամէք, միւս կողմէ սակայն ուղտը կը կլլէք:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ պնակին ու գաւաթին արտաքինը կը մաքրէք, մինչ գիտէք թէ ներսիդին եղող ուտելիքն ու խմելիքը ի՛նչ յափշտակութեամբ եւ աղտեղութեամբ ձեռք բերած էք: Կո՛յր փարիսեցի, նախ գաւաթին եւ պնակին ներսը մաքրէ. այսպիսով դուրսն ալ մաքուր կ'ըլլայ:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ կը նմանիք կիրով ճերմկցուած գերեզմաններու, որոնք արտաքնապէս գեղեցիկ կ'երեւին, բայց ներքնապէս լեցուն են մեռելներու ոսկորներով եւ ամէն տեսակի պղծութեամբ: Նոյնպէս էք դուք. արտաքնապէս մարդոց արդար կ'երեւիք, բայց ներքնապէս լեցուն էք կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ մարգարէներու շրիմները կը շինէք եւ արդարներուն գերեզմանները կը զարդարէք ու կ'ըսէք. “Եթէ մենք մեր հայրերուն ժամանակը ապրած ըլլայինք, մարգարէներու սպանութեան մասնակից պիտի չըլլայինք”:

Ահաւասիկ, դուք արդէն իսկ կը վկայէք թէ որդիներն էք անոնց՝ որոնք մարգարէները

կոտորեցին: Գացէք ամբողջացուցէք ձեր հայրերուն կիսատ ձգած գործը: Օձե՛ր, իժերո՛ւ ծնունդներ, ինչպէ՞ս պիտի կարենաք փախուստ տալ դժոխքի դատապարտութենէն: Ահա, ես ձեզի մարգարէներ, իմաստուններ, օրէնքի ուսուցիչներ պիտի դրկեմ. դուք անոնցմէ ոմանք պիտի սպաննէք, ոմանք խաչէք, ուրիշներ ժողովարաններու մէջ պիտի չարչարէք եւ հալածէք քաղաքէ քաղաք: Այսպիսով բոլոր արդարներուն սպանութեան մասնակից եղած պիտի ըլլաք, սկսեալ անմեղ Աբէլի արիւնէն մինչեւ արիւնը Բաքիայի որդի Զաքարիայի, զոր սպաննեցիք տաճարին եւ զոհասեղանին մէջտեղ: Հաստատ գիտցէք, թէ այս բոլոր ոճիրներուն պատիժը պիտի կրէք դուք:

«Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ կը կոտորէիր մարգարէները եւ կը քարկոծէիր Աստուծոյ քեզի դրկած մարդիկը. քանի՛ անգամ ուզեցի որդիներդ հաւաքել, ինչպէս հաւը իր ձագերը կը հաւաքէ թեւերուն տակ, բայց դուք, Երուսաղէ՛մ՛ բնակիչներ, չուզեցիք: Ահա, “աւերակ պիտի ըլլայ ձեր տունը”: Բայց կ'ըսեմ նաեւ, ա՛լ պիտի չտեսնէք զիս մինչեւ որ ըսէք. “Օրհնեալ ըլլայ ան որ կու գայ Տիրոջ անունով”»:

**«ՀԱՄԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»**  
հՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՄ Ա ԵՒ Բ ՀԱՄԱՐԱԵՐՈՒ ՇՈՒԹ  
ՀԵՌԱԵՎ՝ ՏԵՐ ԱՐԱԵԱ Ա. ԲՀԱ. ԻՇՆԱԵԱՆ

«Հաւատով խոստովանիմ»ին հեղինակն է Ս. Ներսէս Շնորհալի:

Նախ, քանի մը խօսք անոր մասին:  
Ի գուր տեղը չէ, որ այս դէմքը «Շնորհալի» կոչուած է: Ըլլայ իբրեւ մեծ աստուածաբան, լայնամիտ եկեղեցական, բանաստեղծ, երաժիշտ եւայլն, իր գործակիցներուն հետ ստեղծած է մեր Արծաթեայ դարը: Ինչպէս՝ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եւ անոնց գործակիցները ստեղծեցին մեր Ոսկեդարը:

Շատ ծանօթ է, որ Ներսէս Շնորհալին է հեղինակը «Առաւօտ լուսոյ»ին, «Աշխարհ ամենայն»ին, «Նորաստեղծեալ»ին, «Նայեաց սիրով»ին, «Ի քէն հայցեմք»ին, կարելի է շարքը երկարել: Եթէ անոր գրած շարականները հանենք մեր շարակնոցէն, շատ բան չի մնար այնտեղ: Անոր բոլոր գրածները իրենց խորունկ իմաստով կը մղեն հաւատացեալը՝ առաւել ուշադրութիւն դարձնելու իր հաւատքին եւ գայն ապրելու ամբողջական յանձնառութեամբ:

Հիմա կ'անցնիմ նիւթիս:  
Այս աղօթաշարքը կը սկսի Ս. Երրորդութեան խոստովանութեամբ: Ասիկա մեկնակէտն է:

Ներսես Շնորհալի սկիզբէն կը սորվեցնէ, մեր սրտին եւ ուղեղին մէջ կը դրոշմէ, թէ Ս. Երրորդութիւնը մէկ է: Քրիստոնէական վարդապետութեան մէջ աստուածութիւնը երրորդութիւն է. Հայր, Որդի եւ Ս. Հոգի: Ասիկա բազմաստուածութիւն չէ, որովհետեւ Հայրը, Որդին եւ Ս. Հոգին մի են:

Շնորհալի կ'ըսուցանէ, որ երբ կը դիմենք Ս. Երրորդութեան՝ պէտք է խոնարհելով երկիրպագեցնենք: Ասիկա շատ կարեւոր է, սակայն դժբախտաբար անտեսուած՝ ներկայ ժամանակներուն մէջ: Այսօր երբ երկրպագելու խօսք կ'ըլլայ՝ հագիւ քիչ մը գլուխնիս կը ծոենք: Շնորհալի կ'ըսէ, թէ երբ Աստուծմէ բան մը պիտի խնդրես՝ այդպէս որեւէ կերպով չես կրնար խնդրել: Իսկամները երբ կ'աղօթեն՝ ամբողջական կերպով կ'երկրպագեն: Աստուած ալ բնական է, որ գնահատէ իրենց հաւատարմութիւնը, եւ համբուրուած երկրէն առատ ֆարիւղ կը բխեցնէ...: Արդարեւ, երբ կ'ըզես խնդրանք մը ներկայացնել Անոր որ հրեշտակները, մարդիկն ու ամբողջ տիեզերքը ստեղծած է, Անոր պէտք է ներկայանաս պատշաճօրէն:

Շնորհալի յստակ կը դարձնէ, թէ երբ «ողորմէ՛ քու արարածներուդ» կ'ըսենք, մենք մեզ չներկայացնենք Աստուծոյ՝ իբր մաքուր անձեր, եւ երբեք չմոռնանք որ մենք ալ մեղաւոր ենք, եւ ոչ թէ միայն մեղաւոր ենք, այլեւ բազմաթիւ մեղքեր ունինք: Ան սակայն յուսահատ հոգեբանութիւն մը չ'ըզեր ստեղծել, այլ կ'ըզէ որ գիտնանք, թէ բազմաթիւ մեղքեր ունենալով հանդերձ, Աստուած պիտի ողորմի մեզի:

Երկրորդ համարով Շնորհալի Ս. Երրորդութիւնը Լոյս կը հռչակէ: Ան մեզ կը տանի մինչեւ ստեղծագործութեան սկզբնաւորութիւնը, երբ Աստուած խաւարը տեսնելով, ըսաւ որ լոյս ըլլայ: Եւ լոյս եղաւ:

Մեր մտքերն ու հոգիները ստեղծագործութեան առաջին օրուան պէս անորոշ ու խաւար են: Ուստի մենք կարիք ունինք Աստուծոյ միջամտութեան: Ան է, որ պիտի լուսաւորէ մեր մտքերը: Առանց Անոր պարգեւած լոյսին՝ չենք կրնար գիտնալ, թէ ի՞նչ է բարին եւ ի՞նչն է Իրեն հանելին: Այսօր հեռատեսիլը, համացանցը եւ այլն մեր բոլորիս ուղեղներուն մէջ ամէն օր այնպիսի աղտեր կը թխմեն, որ իսկապէս անգօր ենք, եւ Աստուծոյ միջամտութեան կարօտ ենք ձերբազատուելու համար մեղքի թակարդներէն:

Հետեւեալ խրատականը կարդացած եմ: Արդիական հովերով տարուած երիտասարդին մէկը ներկայացած է պուտտայական կրօնաւորի մը եւ հարցուցած անոնց կրօնի մասին: Մինչ այդ կրօնաւորը պատրաստած թէրբ գաւաթին մէջ լեցնելու վրայ է եղեր: Գաւաթը լեցուած էր

եւ կը յորդէր, սակայն կրօնաւորը չէր դադրեր թէյամանը պարպելէ: Այն ատեն երիտասարդը կ'ըսէ. «Ի՞նչ կ'ընես...գաւաթը լեցուած է եւ թէրբ կը թափի»: Կրօնաւորը կը պատասխանէ. «Քու ուղեղդ ալ այս գաւաթին պէս լեցուած է տեսակ տեսակ հին գաղափարներով: Հետեւաբար, անիկա պէտք է միշտ պարպուի եւ լեցուի նոր գաղափարներով»:

Մեր ուղեղները անհանոյ ազդեցութիւններու տակ են: Ասիկա ներկայ ժամանակին յատուկ երեւոյթ չէ, թէեւ հիմնական ազդեցութիւնները անելի արագ են եւ անելի շատ են: Արդ, Շնորհալի կ'աղերսէ Աստուծոյ, որ Ան մեր ուղեղները եւ հոգիները մաքրէ, որպէսզի արժանի ըլլանք իր ողորմութիւնը ունենալու, եւ որպէսզի մեր խնդրանքները կատարուին:

Արդարեւ, երբ անկեղծութեամբ եւ լրջութեամբ կ'աղօթենք «Հաւատով խոստովանիմ»ը, անիկա մեզ կը բարձրացնէ Տիրոջ ներկայութեան, որ երանական կեանքն է:

**ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ**  
**ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ**

ՀԵՂՈՒԱԿ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆ  
ԽԱՐԵՊՈՐԴ ԳՆՈՒԿ Բ. Գ.

**Է**

**Ծառը եւ Իր Պտուղը (15-20)**

«Զգուշացէ՛ սուտ մարգարէներէն, որոնք ոչխարի կերպարանքով կը մօտենան ձեզի, մինչ ներքնապէս յափշտակիչ գայլեր են: Իրենց գործերէն պիտի ճանչնաք՝ զանոնք: Մի՞թէ փուշէն խաղող կը ֆղեն՝ Դն կամ տատակէն՝ թուղ: Լաւ ծառը լաւ պտուղ կը տայ, իսկ գէշ ծառը՝ գէշ պտուղ: Լաւ ծառը գէշ պտուղ չի կրնար տալ եւ ոչ ալ գէշ ծառը՝ լաւ պտուղ: Այն ծառը որ լաւ պտուղ չի տար, կը կտրուի եւ կրակը կը նետուի: Ուրեմն իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք»:

*Կը թուի, թէ անկապակից հատուած մըն է: Սակայն այդպէս չէ:*

*Հատուածին տրուած «Ծառը եւ իր պտուղը» անունը՝ ի՞նչ կապ ունի սուտ մարգարէներուն հետ:*

*Նախորդ հատուածին մէջ կատարուած էր «Ղժուարին» ճամբու եւ «Լայն» ճամբու բաղդատութիւն մը: Հիմա կը կատարուի երկրորդ բաղդատութիւն մը, այսինքն՝ սուտ մարգարէներու եւ իրաւ կամ ճշմարիտ մարգարէներու միջեւ:*

*Յիսուսի դիմաց բաղմոնութիւն մը զինք կ'ընեն զրբէր: Արդեօք անոր մէջ «սուտ մարգարէն» կային, թէ Յիսուս անոնցմէ դուրս՝ կրօնական առաջնորդներու ակնար-*

կուլթիւններ կ'ընէր: Շատ դժուար է, չըսելու համար անկարելի է մեզի համար ասիկա գիտնալը: Կարելի է ենթադրել, թէ անոնց մէջ ղպիրներ եւ փարիսեցիներ կային, եւ Յիսուս անոնց է, որ կ'ականարկէր: Ամէն պարագայի յստակ է, որ սուտ մարգարէները որոնց մասին կը խօսի Յիսուս՝ ոչխարի կերպարանքով մօտեցողներ էին: Այսինքն՝ մարդիկ որոնք անմեղի երեւոյթ ունէին: Այդպիսիներ այսօր ալ կան, եւ՝ մեծ թիւերով:

Հարցումը որ պիտի դնենք այստեղ սա է. Ինչպէ՞ս կարելի է ճանչնալ զանոնք: Ինչպէ՞ս կարելի է սուտ մարգարէներուն սուտ ըլլալը ճանչնալ:

Բ. Օրէնքի գիրքին մէջ գրուած է. «Եթէ ձեր մէջէն մարգարէ մը կամ երազատես մը ելլէ ու ձեզի նշան մը կամ հրաշք մը ընէ, եւ ձեզի ըրած նշանը կամ հրաշքը կատարուի, ու ձեզի ըսէ թէ՝ «Երթանք օտար աստուածներ պաշտենք, որոնք դուք չէք ճանչցած», այն մարգարէին կամ երազատեսին խօսքին մտիկ մի՛ ընէք, քանզի ձեր Տէր Աստուածը ձեզ կը փորձէ, որպէսզի հասկնայ, թէ արդեօք դուք ձեր Տէր Աստուածը ձեր բոլոր սրտով ու բոլոր հոգիով կը սիրէ՞ք» (13.1-3): Այս հատուածը զգուշացում է ամէն սուտ մարգարէէ: Ըստ ըսուածին, սուտ մարգարէն ան է, որ օտար աստուածներ պաշտելու կ'առաջնորդէ:

Նոյն գիրքի 18-րդ գլխուն մէջ կը կարգանք. «Եթէ մարգարէ մը Տիրոջ անունով բան մը ըսէ ու երբ այն բանը իրօք չկատարուի, ըսել է Տիրոջ խօսքը չէր, այլ մարգարէն յանդգնութեամբ ըսեր է: Անկէ մի՛ վախնար» (հմր 22):

Բայց ինչպէ՞ս նախորդ մէջբերումը կ'ըսէ՝ սուտ մարգարէներն ալ նշաններ կամ հրաշքներ կ'ընեն, կամ իրենց ըսածները կը կատարուին: Արդ, ինչպէ՞ս զանազանել սուտը՝ ճշմարիտէն, ինչպէ՞ս ճանչնալ սուտը եւ ինչպէ՞ս ճանչնալ ճշմարիտը:

**Որեւէ ուսուցում որ հաւատարիմ չէ Աստուծոյ խօսքին՝ սուտ է:**

1.- Ուսուցման մը ճշմարիտ ըլլալը կը յայտնուի, երբ անիկա հաւատարիմ է Աստուածաշունչին: Որեւէ ուսուցում որ հաւատարիմ չէ Աստուծոյ խօսքին՝ սուտ է:

2.- Սուտ մարգարէներուն ստույգութիւնը յայտնի կ'ըլլայ, երբ կը տեսնենք, թէ իրենց ներկայութիւնը առիթ կ'ըլլայ պառակտումներու: Ասիկա ուղիղ վարդապետութեան պատճառով երեւցած բաժանումները չեն:

Խօսքը պառակտումներու մասին է, եւ ոչ թէ բաժանումներու: Ըսել չեմ ուզեր, թէ բաժանումները պառակտումներու չեն կրնար հասնիլ: Բաժանումները կարելի է դարմանել, բայց պառակտումները անդարմանելի են եւ կորուստի կը տանին:

Ներկայ ժամանակներու սուտ մարգարէներուն մասին երբ կը խօսինք՝ յաճախ աղանդաւորներն են մեր նիւթը: Եկէ՛ք, այս անգամ աղանդաւորներուն մասին չխօսինք, այլ խօսինք մեր մասին:

Արդեօք Յիսուսի ազդարարութիւնը միայն ուրիշներո՞ւն համար է:

Մեզմէ իւրաքանչիւրը ինք տեսակ մը ծառ է: Իւրաքանչիւրս կրնայ բարի կամ չար պտուղ ունենալ: Նախապէս ըսուած միտքերը եթէ նկատի ունենաք: Կրնանք այսպէս բացատրել: Ո՛վ որ գիտէ իր կեանքին մէջ ճիշդ խնդրանքը ընել Աստուծոյ եւ ճիշդ ուղղութեամբ աղօթել, նաեւ աղօթել ուրիշներուն ներելով. ո՛վ որ

ո՛վ որ գիտէ իր կեանքին մէջ նշմարիտ դուռը գտնելով՝ ճիշդ ժամանակին բաղխել՝ անիկա առաքիլուութիւններու ճամբուն մէջ կը փայլ եւ երկրէն երկից կը բարձրանայ:

գիտէ իր կեանքին մէջ փնտուել՝ թէ ինչպէ՞ս կրնայ երկինքի արքայութեան իրագործման ծառայել. եւ ո՛վ որ գիտէ իր կեանքին մէջ ճշմարիտ դուռը գտնելով՝ ճիշդ ժամանակին բաղխել՝ անիկա առաքիլութիւններու ճամբուն մէջ կը քայլ եւ երկրէն երկինք կը բարձրանայ: Այլ խօսքով՝ անոր կեանքը առաքիլութեան պտուղներով կը լեցուի: Եւ մարդիկ այդ պտուղները տեսնելով՝ ո՛չ թէ միայն մեզ կը ճանչնան, այլ նաեւ մեզմով կը ճանչնան զԱստուծո: Յիսուս ըսած է, չէ՞, տեսանք. «ձեր լոյսը թող այնպէս շողայ մարդոց առջեւ, որ անոնք ձեր բարի գործերը տեսնեն եւ փառաւորեն ձեր Հայրը, որ երկիցի մէջ է» (Մտ 5.16):

**ՃՇԱՍԻՏ ԱՆՎԵՐՏԱՆԵՐ (21-23):**

«Ձկարծէք թէ ով որ ինծի “Տէ՛ր, Տէ՛ր” կ'ըսէ, երկիցի արքայութիւնը պիտի մտնէ. այլ պիտի մտնէ միայն ան, որ երկիցի մէջ գտնուող իմ Հօրս կամքը կը կատարէ: Երբ այդ օրը գայ, շատեր պիտի ըսեն ինծի. “Տէ՛ր, Տէ՛ր, չէ՞ որ բու անուևովդ Աստուծոյ պատգամները փոխանցեցիք, բու անուևովդ չար ոգիներ դուրս հանեցիք եւ բու անուևովդ բազմաթիւ հրաշքներ գործեցիք”: Այն ատեն պիտի յայտարարեմ անոնց. “Քնա՛ւ ձեզ չեմ ճանչնար: Հեռացէ՛ք ինձմէ դուրս բոլորդ, որ չարիք կը գործէիք”»:

Այս հատուածը յստակօրէն կապուած է նախորդին:

Օրը որուն կ'ականարկէ Յիսուս՝ այն վախճանական օրն է, երբ Աստուծոյ Որդին վերստին պիտի գայ, որպէսզի իրենները իր քովը առնէ:

Այս համարներուն ընթերցումը մեզի կը յիշեցնէ Յիմար եւ իմաստուն կոյսերուն առակը: Երբ աշխարհի վախճանը գայ, Աստուծոյ Որդին փեսայի մը պէս պիտի գայ եւ երկինքի արքայութեան դուռը հարսնետան մը դրան պէս ժամանակի մը համար պիտի բանայ, ու ներս պիտի մտնեն անոնք՝ որ պատրաստ էին: Ապա դուռը պիտի փակուի: Իսկ դուրս պիտի մնան

անպատրաստները: Ու անոնց թախանձանքին դիմաց թէ՛ «Տէ՛ր, Տէ՛ր, դուռը բաց մեզի», Տէրը պիտի պատասխանէ, ըսելով՝ «Իսկապէս որ չեմ ճանչնար ձեզ»:

Ինչպէս ըսի, այս հատուածը յատկօրէն կը կապուի սուտ մարգարէներուն վերաբերող հատուածին: Հետեւաբար սուտ մարգարէներ են նաեւ անոնք, որ «Տէ՛ր, Տէ՛ր» կ'ըսեն, սակայն չարիք կը գործեն:

Քրիստոսի անունով խօսիլը եւ սակայն միւս կողմէ չարիք գործելը՝ իրարու հետ անհաշտելի են:

Որո՞նք են իրաւ հաւատացեալները, կամ որո՞նք են Քրիստոսի իսկական հետեւորդները:

Այս հատուածը զօրեղ կերպով ցոյց կու տայ, թէ խօսքին եւ գործին միջեւ շատ մեծ տարբերութիւն կրնայ ըլլալ: Անոնք որ կը դաւանին լեզուով՝ անպայմանօրէն անոնք չեն որ փրկութիւնը ունին կամ կը ժառանգեն: Պօղոս առաքեալ Հռոմայեցիներու նամակին մէջ կ'ըսէ. «եթէ բերանովդ խոստովանիս, թէ Յիսուս Տէր է, եւ սրտիդ մէջ հաւատաս, թէ Աստուած զինք մեռելներէն յարուցանեց՝ կը փրկուիս» (Հռ 10.9): Արդեօք ի՞նչ ըսել կ'ուզէր առաքեալը: Կը բաւէ՞ միայն այս ճշմարտութեան հաւատալը, զայն մտքի մէջ ունենալը կամ զայն բերնով արտայայտելը:

Միտքով կրնանք շատ բան հասկնալ եւ գիտնալ: Բայց հասկնալը եւ գիտնալը չեն բաւեր: Կարեւորը հաւատքին եւ կեանքին կապը գտնելն է:

Եթէ հաւատքը կեանքին մէջ գործի չի վերածուիր՝ չի կրնար մեզ փրկութեան առաջնորդել:

... հասկնալը եւ գիտնալը չեն բաւեր: Կարեւորը հաւատքին եւ կեանքին կապը գտնելն է:

Տեսաք որ Յիսուսի խօսքին մէջ նշաններու եւ հրաշքներու ակնարկութիւն կայ: Այսինքն՝ մարդիկ կրնան Քրիստոսի անունով շատ լաւ խօսիլ, հմայել, նոյնիսկ նշաններ եւ հրաշքներ ընել, սակայն անոնք չար գործեր կրնան ըլլալ: Լաւ խօսիլը, Քրիստոսը «Տէ՛ր, Տէ՛ր» կանչելը, նշաններ եւ հրաշքներ գործելը ապացոյց չեն Աստուծոյ պատկանելու:

Առաքելական նամակները մեզի յաճախ կը յիշեցնեն, որ Աստուծոյ խօսքը միայն լսողներ չըլլանք, այլ նաեւ զայն մեր կեանքով թարգմանենք եւ գործի վերածենք:

Կեանքով թարգմանելու մասին Պօղոս առաքեալ գրած է. «Եթէ իրապէս Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի, կը նշանակէ՝ թէ դուք այլեւս մարմնական ցանկութիւններուն համաձայն չէք ապրիր, այլ Մ. Հոգիին կամեցած ձեւով: ... եղբայրներ, պէտք է ապրինք մեր մարմինին համար եւ

մարմնաւորապէս: Որովհետեւ եթէ մարմնաւորապէս ապրիք՝ պիտի մեռնիք. իսկ եթէ Հոգիին օգնութեամբ ձեր մեղքերը սպաննէք՝ պիտի ապրիք» (Հռ 8.9, 12-13): Ուրեմն, Աստուծոյ խօսքը կեանքով թարգմանել՝ կը նշանակէ հոգեւորապէս ապրիլ կամ հրաժարիլ ըստ մարմնական ցանկութիւններու ապրելէ:

Հաւատքը գործի վերածելու մասին Յակոբոս առաքեալ գրած է. «Եղբայրներս, ի՞նչ օգուտ այն մարդուն՝ որ կ'ըսէ, թէ հաւատք ունի, երբ որ հաւատքին արտայայտութիւնը եղող գործեր չունի: Միթէ այդպիսի հաւատքը կրնա՞յ զայն փրկել: ... հաւատքը առանձինն՝ առանց գործի մեռած է:

Թերեւս մէկը առարկէ, ըսելով. «Մարդ կայ՝ որ հաւատք ունի, մարդ ալ կայ՝ որ գործերը ունի»: Այնպիսիին կը պատասխանեմ. «Եթէ կրնաս՝ ցոյց տուր հաւատքդ, առանց գործերու: Սակայն ես կրնամ գործերուս ընդմէջէն քեզի ցոյց տալ իմ հաւատքս»: Դուն կը հաւատաս, թէ մէկ Աստուած կայ, չէ՞. շատ լաւ կ'ընես: Բայց դեւերն ալ նոյն բանին կը հաւատան, եւ կը սարսափին: Հետեւաբար, հասկցի՛ր, անմի՛տ մարդ, որ առանց գործերու՝ հաւատքը անօգուտ է» (Յկ 2.14, 17-20):

Ժողովրդային առածը կ'ըսէ. «Այսօրուան գործը վաղուան մի՛ ձգեր»: Ծիշդ նոյն է պարագան հոգեւոր կեանքին մէջ ալ: Երբ կանչուած ես բարի գործ մը կատարելու՝ վաղուան մի՛ ձգեր: Հիմա, այս պահուն պէտք է կատարես զանիկա: Վաղը ուշ կ'ըլլայ: Հաւատքի կեանքը եւ գործը եւս ձգձգելի չեն: Այս վայրկեանէն սկսեալ իմ կեանքս պէտք է փոխեմ, նոր հունի մէջ պէտք է դնեմ: Եւ այս վայրկեանէն սկսեալ բարի գործ կատարելու պէտք է սկսիմ, որովհետեւ վաղն անորոշ է: Կարելի չէ վաղուան ապաւինիլ:

Մենք պէտք է մտածենք, թէ ինչպէ՞ս ժամանակը, տարիները եւ մեր կեանքը պարզեւող Հայրը կը սպասէ, որ ժամանակին, տարիներուն եւ մեր կեանքին իմաստուն տնտեսները ըլլանք, օգտագործենք մեզի տրուած փրկութեան առիթը:

«... եթէ Հոգիին օգնութեամբ ձեր մեղքերը սպաննէք՝ պիտի ապրիք»:

Այս վայրկեանէն սկսեալ իմ կեանքս պէտք է փոխեմ, նոր հունի մէջ պէտք է դնեմ:

(Շարունակելի 30)

## ԵՐԵՄՆՈՐԵԱԿ

**Չորեքշաբթի, 01 Ապրիլ 2009**

**Մեծ Պաշտոն ԼԸ. օր**

19.00 Հսկունքի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝ ձաշակենք  
«Հաւատով Խոստովանիմ»ը Զ.

**Հրագւշաբթի, 02 Ապրիլ 2009**

**Մեծ Պաշտոն ԼԹ. օր**

11.00 Արեւազալի ժամերգութիւն  
Խորհրդածութիւն՝  
«Ողջախոհութիւն»ը

**Հաքաթ, 04 Ապրիլ 2009**

**Ծաղկաշարի նահորեալ**

16.00 Ընտանեկան հաւաքոյթ

**Կրորտար, 05 Ապրիլ 2009**

**Ծաղկաշար**

09.30 ժամերգութիւն  
11.00 Ս. Պատարագ  
13.00 Մանուկներու թափօր  
16.00 Դոնբացէք

**Առաջ Երեքշաբթի, 07 Ապրիլ 2009**

19.00 Երեկոյեան ժամերգութիւն

**Առաջ Հրագւշաբթի, 09 Ապրիլ 2009**

10.30 Ս. Պատարագ  
18.00 Կարգ ոտնչուալի  
21.00 Կարգ խաւարման

**Առաջ Ուրբաթ, 10 Ապրիլ 2009**

19.00 Կարգ խաչելութեան եւ թաղման

**Առաջ Հաքաթ եւ Ըրագալոյժ, 11 Ապրիլ 2009**

17.30 Ս. Գրային ընթերցումներ  
18.30 Ս. Պատարագ

**Կրորտար, 12 Ապրիլ 2009**

**Ս. Զատիկ**

09.30 ժամերգութիւն  
11.00 Ս. Պատարագ

**Երկուշաբթի, 13 Ապրիլ 2009**

**Յիւսուս Արեւելոյ**

**Երեքշաբթի, 14 Ապրիլ 2009**

19.00 Երիտասարդական զրոյց՝  
«Կենսոլորտի գիտութիւնն ու կրօնը»

**Հրագւշաբթի, 16 Ապրիլ 2009**

11.00 Աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

**Կրորտար, 19 Ապրիլ 2009**

09.30 ժամերգութիւն  
11.00 Ս. Պատարագ

**Հրագւշաբթի, 23 Ապրիլ 2009**

11.00 Աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

**Կրորտար, 26 Ապրիլ 2009**

09.30 ժամերգութիւն  
11.00 Ս. Պատարագ

The **SOURP HAGOP** Church Executive Board  
Welcomes You to our 3<sup>rd</sup> Annual  
Palm Sunday Family Event



An activity for the whole family  
Saturday, April 4, 2009 from 4-6 pm  
Armenian Community Center - Homenetmen Gamk Gym



The event is for children  
between the ages of 0-12

RSVP by March 30  
514-331-5445 X 202  
eglise58@sourphagop.com

**FREE ADMISSION**

**ՍՈՒՐՔ ՅԱԿՈՔ** Եկեղեցւոյ Գործադիր Սարմինը  
կը հրաւիրէ ձեզ Ծաղկազարդի  
իր 3-րդ տարեկան ընտանեկան հաւաքոյթին

Ամբողջ ընտանիքին համար  
Շաբաթ. 4 Ապրիլ 2009. Երեկ. ժամը 4-6

- Խաղեր
- Ուտելիքներ
- Ձախիկ՝ Նապիկ
- Չեռային աշխատանք
- Անակնկալներ

Մասնաւորաբար 0-12 տարեկան երեխաներու համար

Կը խնդրուի մինչեւ 30 Մարտ 2009 տեղերը ապահովել  
հեռաձայնելով՝ 514 331 5445 X 202 քիւիմ  
լամ գրելով՝ eglise58@sourphagop.com ե-հասցիին:

**ՍՈՒՏՔ ԱԶԱՏ**

## ՀԱԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

ՃԱՇԱԿԵՆՔ «ՀԱՄՏՈՎ  
ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»ը,  
21-24 ՀԱՄԱՐՆԵՐ՝  
ԿՐ ԽՈՐՀՐՊԱԾԷ

**Պր. ԶԱԽԵՆ  
ՉՈՔԱՔԻԵԱՆ**

Չորեքշաբթի, 01 Ապրիլ 2009  
Երեկոյեան ժամը 7.00-ին

## ԱՐԵՎԱԶԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ «ՈՂՋԱՆՈՇՈՒԹԻՒՆ»ը

ԿՐ ԽՈՐՀՐՊԱԾԷ  
**ՏԵՐ ԱՐԱԽԵԱ Ա. ՔՇԱԿ  
ԻՇՆԱՆԵԱՆ**

Հրագւշաբթի, 02 Ապրիլ 2009  
Առաւօտեան ժամը 11.00-ին